



Պետական գնումներ

Շրջանակային համաձայնագրեր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ի՞նչ է շրջանակային համաձայնագիրը Հրահանգի համաձայն:
- Հարմա՞ր է արդյոք շրջանակային համաձայնագիրը բոլոր գնումների համար:
- Ե՞րբ և ինչպե՞ս պետք է շրջանակային համաձայնագիրը հայտարարվի ԵՄՊՏ-ում:
- Ի՞նչ ընթացակարգ է օգտագործվում շրջանակային համաձայնագիր գնելու համար:
- Քանի՞ տնտեսվարող սուբյեկտներ են նշանակվում մի քանի մատակարարներով շրջանակային համաձայնագրին:
- Կարո՞ղ են նոր պետական պատվիրատուներ և նոր տնտեսվարող սուբյեկտներ միանալ շրջանակային համաձայնագրին՝ դրա ստեղծումից հետո:
- Ի՞նչ տևողություն ունի շրջանակային համաձայնագիրը:
- Ի՞նչ հարցեր է ընդգրկում շրջանակային համաձայնագիրը:
- Ինչպե՞ս են շնորհվում պայմանագրերը շրջանակային համաձայնագրի համաձայն, որը ստեղծվել է միայն մեկ տնտեսվարող սուբյեկտով (մեկ մատակարարով համաձայնագիր):
- Ինչպե՞ս են շնորհվում պայմանագրերը շրջանակային համաձայնագրի համաձայն, որը

ստեղծվել է մեկից ավելի տնտեսավարող սուբյեկտներով (մի քանի մատակարարով համաձայնագիր):

- Պե՞տք է արդյոք ծանուցել մասնակիցներին, իրականացնել մորատորիում և հրապարակել պայմանագրի շնորհման հայտարարություն:

Ներածություն. Շրջանակային համաձայնագրերը վաղուց օգտագործվում էին ԵՄ մի շարք Անդամ երկրներում, ներառյալ՝ Հյուսիսային Եվրոպայի երկրները, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան: Գնման այս եղանակը հիմնականում ներառում է պետական պատվիրատու (կամ պատվիրատուներ), որը հայտարարում է հնարավորության մասին և պայմանագիր է կնքում կամ այլ պայմանավորվածություն է ձեռք բերում մեկ կամ մի քանի մասնակիցների հետ՝ ամրագրված ժամանակահատվածում աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար:

Եթե շրջանակային համաձայնագրով կատարվելիք գնումների գնահատված արժեքը գերազանցում է ԵՄ համապատասխան ֆինանսական շեմը (տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 5- Ֆինանսական շեմերի ընկալումը*), շրջանակային համաձայնագիրը հայտարարվում է Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագրում (ԵՄՊՏ) և մասնակիցներին շնորհվում է շրջանակային համաձայնագիրը՝ Հրահանգով նախատեսված գնումների ստանդարտ ընթացակարգերի օգտագործմամբ:

Եթե պահանջ է առաջանում այնպիսի աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար, որոնք ընդգրկված են շրջանակային համաձայնագրում, ապա շրջանակային համաձայնագրի շահառու հանդիսացող պետական պատվիրատուն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումն իրականացնում է շրջանակային համաձայնագրից՝ առանց հետագա մրցակցային գործընթացի իրականացման անհրաժեշտության:

Շրջանակային համաձայնագրերի հիմնական հատկանիշը դրա գործողության ընթացքում կատարվելիք գնումների ամբողջական քանակի վերաբերյալ բացարձակ որոշակիության բացակայությունն է: Շրջանակային համաձայնագիրը որոշակի ճկունություն է ապահովում պետական պատվիրատու հանդիսացող գնորդների

համար, որոնք համաձայնագրի սկզբում չեն կարող սահմանել գնումների ամրագրված մակարդակ: Շրջանակային համաձայնագրերը կարող են ներառել մեկ կամ մի քանի պետական պատվիրատուներ՝ որպես գնորդներ, և մեկ կամ մի քանի մասնակիցներ:

Շրջանակային համաձայնագրերը հաճախ օգտագործվում են գնումների կենտրոնացված մարմինների կողմից, որոնք գործում են կա՛մ իրենց անունից, կա՛մ ի շահ մի քանի պետական պատվիրատուների: Տե՛ս նաև *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 20- Գնումների կենտրոնական մարմիններ:*

Գնումների իրականացման համաձայնագրային մեթոդի նպատակը գնումների իրականացման նպատակով կատարվող ծախսերի և ժամանակի խնայողությունն է: Պետք է նշել, որ ամենաեական խնայողությունները հիմնականում կատարվում են, երբ շրջանակային համաձայնագրի միջոցով կատարվող գնումները համակցվում են կենտրոնացված գնումների և էլեկտրոնային գնումների հետ (Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 17- Էլեկտրոնային գնումներ*):

Մինչև 2004/18 Հրահանգի (“Հրահանգ”) ընդունումը, պետական գնումների Հրահանգը չունեի հատուկ դրույթներ, որոնք սահմանում էին շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումների իրականացումը: Այս մեթոդներն օգտագործող Անդամ երկրները կարծում էին, որ հատուկ դրույթների կարիք չկա, քանի որ գործող Հրահանգը պարունակում էր բավարար քանակի դրույթներ: ԵՃ մակարդակում, այնուամենայնիվ, անհանգստություն կար այն եղանակի վերաբերյալ, որով որոշ շրջանակային համաձայնագրեր գործարկում էին, և հստակության ու հատուկ դրույթների բացակայությունը նշանակում էր, որ որոշ Անդամ երկրներ թույլատրում են շրջանակային համաձայնագրերի օգտագործումը, իսկ մյուսները՝ ոչ:

Ի՞նչ է շրջանակային համաձայնագիրը Հրահանգի համաձայն:

“Շրջանակային համաձայնագիր” հասկացությունը օգտագործվում է՝ նկարագրելու մի շարք առևտրային և գնումների իրականացման գործիքներ: Հրահանգը սահմանում է “շրջանակային համաձայնագրի” հասկացությունը և հենց այս շրջանակային համաձայնագիրն է, որ ընդգրկված է Գնումների վերաբերյալ այս կարճ գրության մեջ:

Հրահանգի Հոդված 32-ը սահմանում է, թե ինչ եղանակով կարող են կնքվել և օգտագործվել շրջանակային համաձայնագրերը: Անդամ երկրները կարող են կիրարկել այս դրույթները, ինչը նշանակում է, որ շրջանակային համաձայնագրի միջոցով գնումների կատարումը, Հրահանգի պայմանների համաձայն, պարտադիր չէ: Այնուամենայնիվ, եթե գնումները կատարվում են շրջանակային համաձայնագրերի միջոցով, ապա Հրահանգի համապատասխան դրույթները ենթակա են կիրառման:

: Շրջանակային համաձայնագրի հասկացությունը սահմանված է Հրահանգի Հոդված 11(5)-ում՝ որպես

“մեկ կամ ավելի պետական պատվիրատուների և մեկ կամ ավելի մասնակիցների միջև համաձայնություն, որի նպատակը տրված ժամանակահատվածում շնորհվելիք պայմանագրերի պայմանների սահմանումն է, մասնավորապես՝ գնի և, անհրաժեշտության դեպքում, նախատեսված որակի հետ կապված”

Սա նշանակում է, որ շրջանակային համաձայնագիր կնքած պետական պատվիրատուն հայտարարում է շրջանակային համաձայնագիրը և հրավիրում է մասնակիցներին՝ դիմել շրջանակային համաձայնագրում գրանցվելու համար: Պետական պատվիրատուն հայտարարություն է տալիս ԵՄՊՏ-ում և օգտագործում է հայտերի ընտրության և գնահատման համար Հրահանգում սահմանված գնումների ստանդարտ ընթացակարգերը: Հայտերի ստացումից և գնահատումից հետո պետական պատվիրատուն շնորհում է շրջանակային համաձայնագիրը մեկ կամ մի քանի մասնակցի: Պետական պատվիրատուն և շրջանակային համաձայնագրի մասնակիցներն այնուհետև կնքում են շրջանակային համաձայնագիր, որով սահմանվում է շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին պայմանագրերի շնորհման կարգը և պայմանները:

Շրջանակային համաձայնագրի հիմնական առավելությունն այն է, որ ԵՄՊՏ-ում հրապարակվում է մեկ հայտարարություն և կիրառվում է ԵՄ գնումների մեկ գործընթաց, որը ներառում է շրջանակային համաձայնագրի սահմանումը և այդ

շրջանակային համաձայնագրով ընդգրկված պայմանագրերի հետագա շնորհման կարգը:

Շրջանակային համաձայնագրի միջոցով շնորհված պայմանագրերը կարող են շնորհվել կա՛մ անմիջապես շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցներին՝ առանց հետագա մրցակցության, կա՛մ կիրառելով մրցակցությունը՝ միայն շրջանակային համաձայնագիր կնքած մասնակիցների միջև: Շրջանակային համաձայնագրի շրջանակում պայմանագրի շնորհման համար չի պահանջվում կրկին հայտարարություն հրապարակել ԵՄՊՏ-ում կամ իրականացնել ԵՄ գնումների ամբողջական գործընթացը: Սա մեծ առավելություն է, քանի որ այն նվազեցնում է գնման ընթացակարգի կազմակերպման ժամկետները և կարող է բարձրացնել արդյունավետությունն ու էականորեն նվազեցնել ծախսերը և՛ պետական պատվիրատուի, և՛ մասնակցի համար, մասնավորապես, երբ համակցվում է կենտրոնացված գնումների և էլեկտրոնային գնումների հետ:

Գրություն. Որոշ Անդամ երկրներում պետական պատվիրատուն պարտավոր է կիրառել շրջանակային համաձայնագրերը, եթե գնումները ներառված են դրանցում: Այլ Անդամ երկրներում նման պարտավորություն գոյություն չունի: Սա տեղական իրավունքի և քաղաքականության առարկա է:

Շրջանակային համաձայնագրերը կնքվում են հիմնականում մեկից ավելի պետական պատվիրատուների կողմից օգտագործվելու նպատակով: Այս դեպքում, թափանցիկության սկզբունքն ապահովելու համար, Եվրոպական Հանձնաժողովը (ԵՀ) այն կարծիքն ունի, որ շրջանակային համաձայնագիրն օգտագործող պետական պատվիրատուները պետք է նշվեն ԵՄՊՏ հայտարարության մեջ: ԵՀ-ն մեկնաբանել է այս հարցը Շրջանակային համաձայնագրերի վերաբերյալ Բացատրական գրության մեջ.¹

¹ CC/2005/03_rev 1 սուր 14.7.2005

.....շրջանակային համաձայնագրերը կարող են կիրառվել միայն “պետական պատվիրատուի և այն մասնակիցների միջև, որոնք սկզբնապես եղել են շրջանակային համաձայնագրի անդամ”։ Երբ շրջանակային համաձայնագիրը պետք է օգտագործվի մի քանի պետական պատվիրատուների կողմից, այս պետական պատվիրատուները պետք է հստակորեն նույնականացվեն² պայմանագրի հայտարարության, փաստաթղթերի մեջ (օրինակ, մասնագրերի, կամ պետական պատվիրատուներից մեկի տրամադրած ցուցակի [], և այլն)։ Այլ խոսքերով, շրջանակային համաձայնագրերը կազմում են փակ համակարգ, որտեղ ոչ ոք այլևս չի կարող մուտք գործել կա՛մ որպես գնորդ, կա՛մ որպես մատակարար։

- **Հարմա՞ր է արդյոք շրջանակային համաձայնագիրը բոլոր գնումների համար:**

Շրջանակային համաձայնագրերը կարող են կիրառելի չլինել բոլոր տեսակի գնումների համար։ Պետական պատվիրատուն պետք է համոզված լինի, որ շրջանակային համաձայնագիրը նախատեսում է գնման համապատասխան, տնտեսող և արդյունավետ միջոցներ։

Շրջանակային համաձայնագրերի կիրառումը ճիշտ է այն դեպքում, երբ պետական պատվիրատուն ունի աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պահանջ, սակայն անհայտ է դրանց քանակը։

Շրջանակային համաձայնագրի համապատասխանությունը գնահատելու համար պետական պատվիրատուն պետք է հասկանա շրջանակային համաձայնագրերի

² Օրինակ, շրջանակային համաձայնագրի դեպքում, որը կնքվել է որպես միջնորդ, և ոչ թե որպես մեծածախ գնորդ գործող գնումների կենտրոնական մարմնի կողմից, բավարար չի լինի նշելը, որ համաձայնագիրը կարող է օգտագործվել համապատասխան Անդամ երկրում հիմնադրված “պետական պատվիրատուի” կողմից։ Ըստ էության, նման նշումը հնարավորություն չի տալիս նույնականացնել համաձայնագրի անդամ մարմիններին, այն բարդությունների պատճառով, որոնք կարող են ծագել, երբ որոշվում է, թե արդյոք մարմինը համապատասխանում է հանրային ոլորտի մարմնի սահմանմանը, թե ոչ։ Մյուս կողմից, այնպիսի նկարագրությունը, որը թույլատրում է նույնականացնել համապատասխան պետական պատվիրատուներին, օրինակ, “y շրջանի x մարզի համայնքներ”, հնարավոր է դարձնում ստուգել, որ 32(2) Հոդվածի երկրորդ պարբերությունը պահպանվել է։

առավելությունները և թերությունները, շրջանակային համաձայնագրերի տարբեր տեսակները, ինչպես են նրանք ստեղծվում և ինչպես են գործնականում կիրառվում:

Շրջանակային համաձայնագրերի որոշ օրինակներ.

- Կառավարության բաժիններից մեկը կնքում է շրջանակային համաձայնագիր երեք մատակարարների հետ՝ գրենական պիտույքների մատակարարման համար:
- Չորս հարևան տեղական իշխանության մարմիններ կնքում են շրջանակային համաձայնագիր մեկ տնտեսվարող սուբյեկտի հետ՝ ճանապարհների պահպանության համար:
- Գնումների կենտրոնական մարմինը, որը գործում է առողջապահության ոլորտի 10 մարմինների անունից, կնքում է շրջանակային համաձայնագիր չորս մատակարարների հետ՝ շտապօգնության մեքենաների մատակարարման համար:

Ե՞րբ և ինչպե՞ս պետք է հայտարարվի շրջանակային համաձայնագիրը ԵՄՊՏ-ում:

Շրջանակային համաձայնագիրը պետք է հայտարարվի՝ ԵՄՊՏ-ում պայմանագրի հայտարարության հրապարակման միջոցով, եթե շրջանակային համաձայնագրի համաձայն արվող բոլոր գնումների գնահատված արժեքը (առանց ԱԱՀ-ի) գերազանցում է ԵՄ համապատասխան շեմը տվյալ տեսակի պայմանագրի համար:

Պայմանագրի հայտարարությունը հրապարակվում է շրջանակային համաձայնագրի կնքման գործընթացի սկզբում: Օգտագործվում է ԵՄՊՏ պայմանագրի հայտարարության ստանդարտ ձևը և այլ համապատասխան բաժինների հետ միասին պետք է լրացվի նաև շրջանակային համաձայնագրի բաժինը: Տե՛ս նաև *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 6- Հայտարարումը*:

Երբ կնքվում է շրջանակային համաձայնագիրը, շրջանակային համաձայնագրի համաձայն պայմանագրի շնորհումից առաջ ԵՄՊՏ-ում հայտարարություն տալու անհրաժեշտություն այլևս չկա:

Ի՞նչ ընթացակարգ է կիրառվում շրջանակային համաձայնագրի կնքելու համար:

Հողված 32 (2) նախատեսում է, որ հիմնական մրցակցային ընթացակարգերից յուրաքանչյուրը կարող է կիրառվել շրջանակային համաձայնագրի կնքման համար: Գնումների ընթացակարգերի վերաբերյալ հետագա տեղեկատվության համար տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 10- Որո՞նք են պետական գնումների ընթացակարգերը և ե՞րբ կարող են դրանք օգտագործվել:*

Միայն շրջանակային համաձայնագրի հիման վրա պայմանագրի շնորհման դեպքում է, որ տարբեր, շրջանակային համաձայնագրին հատուկ դրույթներ են կիրառվում:

Գործնական գրություն

Չնայած շրջանակային համաձայնագրի կնքման համար հնարավոր է օգտագործել չորս հիմնական մրցակցային ընթացակարգերից յուրաքանչյուրը՝ գործնականում բաց և սահմանափակ ընթացակարգերն ավելի հաճախ են օգտագործվում: Սա տեղի է ունենում այն պատճառով, որ շրջանակային համաձայնագրերը հիմնականում ավելի հարմար են պարզ ապրանքների գնման և ոչ բարդ գնումների համար, ինչը նշանակում է, որ բաց և սահմանափակ ընթացակարգերը ամենահարմարն են:

Կարևոր է հասկանալ, որ շրջանակային համաձայնագիրն ընտրված մասնակիցների ցուցակ չէ, որոնք որակավորված են շրջանակային համաձայնագրում ընդգրկված աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման համար: Այն ավելին է: Շրջանակային համաձայնագրի շնորհման համար տնտեսվարող սուբյեկտները պետք է ունենան պահանջվող որակավորմանը համապատասխանող և ներկայացված հայտեր, որոնք գնահատվում են պետական պատվիրատուի կողմից: Այս հայտերն են, որ շրջանակային համաձայնագրի համաձայն հետագա շնորհումների հիմք են հանդիսանում: Շրջանակային համաձայնագրի շնորհման կամ այնտեղ նշանակման չափորոշիչ կարող է լինել կա՛մ ամենացածր գինը, կա՛մ տնտեսապես ամենաշահավետ հայտը:

Քանի՞ տնտեսվարող սուբյեկտներ են նշանակվում մի քանի մատակարարներով շրջանակային համաձայնագրին:

Երբ պետական պատվիրատուն ցանկանում է նշանակել մեկից ավելի տնտեսվարող սուբյեկտների և ստեղծում է “մի քանի մատակարարներով” շրջանակային համաձայնագիր, մասնակիցների նվազագույն քանակը երեքն է՝ պայմանով, որ կա համապատասխան որակավորում ունեցող 3 մասնակից:

Մի քանի մատակարարով շրջանակային համաձայնագրում նշանակված մասնակիցների առավելագույն քանակի՝ օրենքով նախատեսված սահմանափակում չկա: Մասնակիցների առաջարկված կամ առավելագույն քանակը, այնուամենայնիվ, պետք է նշվի ԵՄՊՏ պայմանագրի հայտարարության մեջ:

Գործնական գրություն

Չնայած համաձայնագրին մասնակցող տնտեսվարող սուբյեկտների թվի՝ օրենքով նախատեսված սահմանափակում չկա, գոյություն ունեն գործնական խնդիրներ: Օրինակ, մեծ թվով մասնակիցների նշանակումը կարող է մասնակցության խոչընդոտ հանդիսանալ տնտեսվարող սուբյեկտների համար, քանի որ շրջանակային համաձայնագրից բիզնեսի իր բաժինը կարող է բավականին փոքր լինել:

Ավելին, եթե օգտագործվում է փոքր մրցույթ (տե՛ս ստորև), այս երկրորդ փուլում կարող է անհրաժեշտություն առաջանալ հրավիրել համաձայնագրի բոլոր մասնակիցներին՝ մասնակցել մրցույթին: Կրկին, մասնակիցները կարող են մասնակցության ցանկություն չունենալ, եթե շատերն են մասնակցում համաձայնագրում: Կա նաև գործնական խնդիր պետական պատվիրատուի համար, երբ այն օգտագործում է համաձայնագիր, որը ներառում է ավելի շատ վարչական հարցեր:

Պետական պատվիրատուն նախապատրաստման փուլում պետք է ուշադիր գնահատի շուկան, դրա պահանջները և ռեսուրսները՝ որոշելու որոշակի շրջանակային համաձայնագրի համար համապատասխան մասնակիցների թիվը:

Կարո՞ղ են նոր պետական պատվիրատուներ և նոր տնտեսվարող սուբյեկտներ միանալ շրջանակային համաձայնագրին՝ դրա ստեղծումից հետո:

Ոչ, շրջանակային համաձայնագրի անդամ պետական պատվիրատուները և տնտեսվարող սուբյեկտները չեն փոփոխվում շրջանակային համաձայնագրի գործողության ընթացքում: Նոր պատվիրատուներ կամ նոր տնտեսվարող սուբյեկտներ չեն կարող միանալ շրջանակային համաձայնագրին, եթե այն արդեն ստեղծվել է:

Ի՞նչ տևողություն ունի շրջանակային համաձայնագիրը:

Շրջանակային համաձայնագրի ժամկետը սովորաբար չի գերազանցում չորս տարին և կարող է ավելի կարճ լինել: Հրահանգը նախատեսում է, որ ժամկետը կարող է գերազանցել չորս տարին միայն “պատշաճ կերպով արդարացված բացառիկ դեպքերում, մասնավորապես՝ շրջանակային համաձայնագրի առարկայի հետ կապված”: Հրահանգը չի սահմանում, թե ինչ է իրենից ներկայացնում պատշաճ արդարացումը՝ չորս տարվա ժամկետը գերազանցելու համար:

ԵՀ-ն մեկնաբանել է այդ հարցը հետևյալ կերպ.

“.....շրջանակային համաձայնագիրը կարող է ունենալ ավելի երկար տևողություն “պատշաճ կերպով արդարացված բացառիկ դեպքերում, մասնավորապես՝ շրջանակային համաձայնագրի առարկայի հետ կապված”։ Այսպես, օրինակ, ավելի երկար տևողությունը կարող է արդարացվել՝ ապահովելու, համապատասխան պայմանագրի համար արդյունավետ մրցակցությունը, եթե դրա իրականացումը պահանջում է ներդրում՝ չորս տարին գերազանցող դեվալվացիայի ժամկետով։ Սա իրականացվում է այն պատճառով, որ պետական գնումների ոլորտում արդյունավետ մրցակցության զարգացումը այս ոլորտը կարգավորող Հրահանգների նպատակներից մեկն է, ինչպես սահմանված է նախադեպային իրավունքով և Դասական Ոլորտի Հրահանգի երկրորդ պարբերությամբ։ Ավելին, պետք է նկատել, որ պետական գնումների ոլորտի Հրահանգները չեն գործում իրավական վակուումի մեջ. Համայնքային և ազգային մրցակցության նորմերը կիրառվում են դրանց նկատմամբ”։

ԵՀ Բացատրական Գրություն-Շրջանակային համաձայնագրեր-Դասական Ոլորտի Հրահանգ CC/2005/03_rev 1 առ 14.07.2005, 2.1 պարբերություն

Որոշակի շուկայի և իրականացվելիք գնումների բնույթը հասկանալը էական է, երբ որոշվում է պայմանագրի ժամկետը։ Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկարաժամկետ պայմանավորվածության առավելությունների (ինչպիսին է գնումների նվազեցված ծախսերը և ավելի արագ գործընթացը) և ամրագրված ժամկետում մրցակցության հնարավոր սահմանափակման հետևանքների հավասարակշռմանը։ Օրինակ, կարող է հարմար լինել շնորհել ավելի կարճ ժամկետով շրջանակային համաձայնագիր SS-ի վրա հիմնված որոշակի սարքավորումների մատակարարման համար, քանի որ տեխնոլոգիաների արագ փոփոխություն է տեղի ունենում (այսինքն, արտադրանքը շատ արագ դուրս է գալիս գործածությունից) և շուկայում կան շատ նոր մուտք գործողներ։

Ի՞նչ հարցեր է ընդգրկում շրջանակային համաձայնագիրը:

Շրջանակային համաձայնագրի պարունակությունը սահմանված չէ Հրահանգում՝ չնայած ազգային օրենսդրությունը կարող է ներառել դա: Շրջանակային համաձայնագիրը սովորաբար ներառում է մանրամասներ հետևյալի մասին. կողմերը, տևողությունը, առարկան, շրջանակային համաձայնագրի համաձայն շնորհվող պայմանագրի նկատմամբ կիրառվող պայմանները, ինչպես պետք է շնորհվեն պայմանագրերը, ներառյալ՝ հետագա (“փոքր”) մրցույթների համար դիմումների կամ պայմանավորվածությունների չափորոշիչներն ու հետագա շնորհումների նկատմամբ կիրառվող չափորոշիչները, մրցութային գները կամ ծախսերի հաշվարկման մեթոդաբանությունը:

Ինչպե՞ս են շնորհվում պայմանագրերը շրջանակային համաձայնագրի համաձայն, որը կնքվել է միայն մեկ տնտեսվարող սուբյեկտի հետ (մեկ մատակարարով համաձայնագիր):

Երբ շրջանակային համաձայնագիրը կնքվել է միայն մեկ մատակարարի հետ, Հրահանգը նախատեսում է, որ պայմանագրերը պետք է շնորհվեն շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների համաձայն: Սա նշանակում է, որ պետական պատվիրատուն պայմանագիրն անմիջականորեն շնորհում է մասնակցին՝ առանց հետագա մրցակցության: Էական փոփոխություններ չպետք է արվեն սկզբնական պայմաններում, որոնց համաձայն կնքվել է շրջանակային համաձայնագիր մասնակցի հետ և շրջանակային համաձայնագիրը չպետք է օգտագործվի անպատշաճ ձևով կամ այնպես, որ կանխի, սահմանափակի կամ խախտի մրցակցությունը:

Ինչպե՞ս են շնորհվում պայմանագրերը շրջանակային համաձայնագրի համաձայն, որը կնքվել է մեկից ավելի տնտեսվարող սուբյեկտների հետ (մի քանի մատակարարով համաձայնագիր):

Երբ շրջանակային համաձայնագիրը կնքվել է մեկից ավելի տնտեսվարող սուբյեկտների հետ է, պետական պատվիրատուն կարող է ընտրել: Գոյություն ունի պայմանագրի շնորհման երկու եղանակ.

- Տարբերակ 1. Պայմանագրի անմիջական շնորհում որոշակի մասնակցի՝ նախապես շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների կիրառմամբ՝ առանց մրցակցային ընթացակարգի անցկացման, կամ
- Տարբերակ 2. Մրցույթի իրականացում՝ շրջանակային համաձայնագրի բոլոր համապատասխան որակավորում ունեցող մասնակիցներին մասնակցության հրավիրելով (“փոքր մրցույթ”):

Երբ հայտարարվում և ստեղծվում է մի քանի մատակարարներով շրջանակային համաձայնագիր, պետական պատվիրատուն պետք է հստակորեն նշի, թե ինչպես պետք է շնորհվի պայմանագիրը և շրջանակային համաձայնագիրը պետք է ներառի պայմանագրի շնորհման գործընթացի իրականացման ձևն ընդգրկող դրույթներ:

Տարբերակ 1-Շնորհումն առանց հետագա մրցակցության. Երբ պետական պատվիրատուն ցանկանում է օգտագործել առաջին տարբերակը և պայմանագիրն անմիջապես շնորհել շրջանակային համաձայնագրի մասնակիցներից որևէ մեկին.

- այն կարող է այդպես վարվել շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների համաձայն,
- կողմերը ոչ մի դեպքում չեն կարող էական փոփոխությունների ենթարկել շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանները,
- և շնորհումը չպետք է անպատշաճ կամ այնպիսի եղանակով արվի, որը կկանխի, կսահմանափակի կամ կխախտի մրցակցությունը:

Գործնականում, շնորհումը կարող է արվել մի քանի եղանակով՝ կախված շրջանակային համաձայնագրի պայմաններից: Օրինակ, կարող է օգտագործվել տեղերի բաշխումը, որպեսզի պայմանագիրը միշտ առաջարկվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, պայմանագրի շնորհումը կարող է տեղի ունենալ մասնակիցների միջև ռոտացիոն եղանակով, կամ մասնակիցներին կարող է շնորհվել շրջանակային համաձայնագրի համաձայն շնորհվելիք պայմանագրերի ամբողջ արժեքից կամ քանակից նախապես սահմանված տոկոսը: Անհրաժեշտ է ապահովել, որ մեթոդներից յուրաքանչյուրի օգտագործման դեպքում այն օգտագործվում է թափանցիկ ձևով և ապահովում է շրջանակային համաձայնագրի մասնակիցների նկատմամբ հավասար վերաբերմունքը:

Տարբերակ 2- փոքր մրցույթի օգտագործմամբ շնորհումը. Պետական պատվիրատուն կարող է օգտագործել երկրորդ տարբերակը՝ փոքր մրցույթը, երբ շրջանակային համաձայնագրում ոչ բոլոր պայմաններն են սահմանված: Այս

գործընթացը հնարավորություն է տալիս ներկայացնել մասնագրերում նշված պայմանները կամ ավելի մանրամասն ձևակերպել գոյություն ունեցող պայմանները: Մա ևս ենթակա է այն սկզբունքին, որ կողմերը ոչ մի դեպքում չեն կարող էական փոփոխություններ մտցել շրջանակային համաձայնագրում սահմանված պայմանների մեջ:

Շրջանակային համաձայնագրի բոլոր մասնակիցները, որոնք ունակ են իրականացնել պայմանագիրը, հրավիրվում են մասնակցելու մրցույթին, որպեսզի ապահովվեն հավասար վերաբերմունքի, ոչ խտրականության և թափանցիկության սկզբունքները:

Հոդված 32 (4) սահմանում է փոքր մրցույթի իրականացման հիմնական պահանջները.

- պետական պատվիրատուն պետք է խորհրդակցի այն մասնակիցների հետ, որոնք ունակ են իրականացնել պայմանագիրը,
- պետական պատվիրատուն պետք է խորհրդակցի մասնակիցների հետ գրավոր կերպով,
- հայտերի վերադարձման համար սահմանված ժամկետը պետք է բավականաչափ երկար լինի՝ թույլատրելու որոշակի պայմանագրի համար հայտերի ներկայացումը, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են պայմանագրի առարկայի բարդությունը և հայտերը հանձնելու համար անհրաժեշտ ժամանակը,
- հայտերը պետք է ներկայացվեն գրավոր
- հայտերի պարունակությունը պետք է գաղտնի մնա մինչև պատասխանի համար սահմանված վերջնաժամկետի ավարտը
- պայմանագիրը պետք է շնորհվի այն մասնակցին, որը ներկայացրել է լավագույն հայտը՝ շրջանակային համաձայնագրի մասնագրերում սահմանված շնորհման չափորոշիչների հիման վրա
- շնորհումը չպետք է արվի անպատշաճ կերպով կամ այնպես, որ կանխի, սահմանափակի կամ խախտի մրցակցությունը

Չկան օրենքով սահմանված մանրամասն ժամկետներ և մասնակիցներին մասնակցության հրավիրման ու հայտերի ներկայացման եղանակը մանրամասն սահմանված չէ: Մա չի նշանակում, որ գործընթացը պետք է իրականացվի ոչ հստակ կամ անկազմակերպ ձևով: Շնորհման գործընթացը պետք է իրականացվի իրավունքի ընդհանուր սկզբունքներին և Պայմանագրի սկզբունքներին համապատասխան, ներառյալ՝ գործընթացը թափանցիկ եղանակով

իրականացնելու պահանջը, որն ապահովում է հավասար վերաբերմունքը և ոչ խտրականությունը: Էլեկտրոնային աճուրդների օգտագործումը փոքր մրցույթների իրականացման ժամանակ թույլատրվում է:

Պե՞տք է արդյոք ծանուցել մասնակիցներին, իրականացնել մորատորիում և հրապարակել պայմանագրի շնորհման հայտարարություն:

Պայմանագիր շնորհող պետական պատվիրատուն պետք է համապատասխանի սովորական հայտարարման և մորատորիումի պահանջներին, երբ ստեղծվում է շրջանակային համաձայնագիրը: Պայմանագրի ստանդարտ հայտարարությունը պետք է հրապարակվի ԵՄՊՏ-ում, եթե շրջանակային համաձայնագրի համաձայն շնորհվելիք բոլոր պայմանագրերի գնահատված ընդհանուր արժեքը գերազանցում է համապատասխան շեմը: Տե՛ս նաև *Գնումների մասին կարճ գրություն 6-Հայտարարում*:

Հրահանգը չի պարունակում պայմանագրի շնորհման հայտարարության հրապարակման պարտականություն, եթե պայմանագիրը շնորհվել է (պատվիրվել է) շրջանակային համաձայնագրի միջոցով: Հայտարարելու և պայմանագրի շնորհումից հետո մորատորիումի պահանջներին համապատասխանելու պահանջը տարբերվում է՝ ազգային օրենսդրության համաձայն: Սա այն պատճառով է, որ Իրավունքի պաշտպանության միջոցների մասին Հրահանգի դրույթները, որոնք վերաբերում են այս իրավիճակին, պարունակում են վերապահումներ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր Անդամ երկիր ինքը պետք է որոշի՝ ընդունել այս վերապահումները, թե ոչ:

Գործնական գրություն-շրջանակային համաձայնագրի ղեկավարումը

Պետական պատվիրատուն, որն իրականացնում է շրջանակային համաձայնագիր, պետք է արդյունավետ կերպով ղեկավարի և դիտանցի այն: Կարևոր է, օրինակ, ապահովել, որ պետական պատվիրատուն գնումներ կատարի միայն շրջանակային համաձայնագրի շրջանակներում, ինչպես

հայտարարվել է, և որ շնորհման մեթոդները համապատասխան լինեն շրջանակային համաձայնագրին և Հրահանգի դրույթներին:

Պետք է նաև ապահովել, որ շրջանակային համաձայնագրերը սահմանված չեն այնպես, որ խախտեն մրցակցությունը, և նրանք անպատշաճ կերպով չեն օգտագործվում:

Հետագա ընթերցանություն.

- Եվրոպական հանձնաժողովի Բացատրական Գրություն-Շրջանակային Համաձայնագրեր-Դասական Ոլորտի Հրահանգ CC/2005/03_rev 1 առ 14.7.2005 թ.
- Համաշխարհային Բանկ-Շրջանակային Համաձայնագրերի Ներածություն